ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ՊԱՌԱՎԱՔԱՐ համայնքի ավագանի

ՈՐՈՇՈՒՄ

25 – ը նոյեմբերի 2016 թ. թիվ 9 նիստի թիվ 17 – Ն

2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 – րդ հոդվածի 3 – րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32 – րդ հոդվածի պահանջներով, **Պառավաքար** համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հաստատել 2017 թվականի համայնքի բյուջեն՝

   ա/ եկամուտների գծով 38904.9 ---- հազար դրամ

   բ/ ծախսերի գծով 42104.9 ---- հազար դրամ

   գ/ դեֆիցիտի ծածկմանն ուղղված միջոցներ 3200.0 ---- հազար դրամ:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ (հատված 1):
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական դասակարգման՝ (հատված 2):
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 3):
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասորդը)՝ (հատված 4):
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասորդի) ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ (հատված 5):
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ (հատված 6):
8. Սահմանել, որ

   ա/ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է ստացված փաստացի մուտքերի սահմաններում՝ պահպանելով ծախսերի համամասնությունները:

   բ/ թույլատրել համայնքի ղեկավարին գանձապետական հաշվի 2015 թվականի տարեվերջյան ազատ նմացորդն ինքնուրույն ներառել 2016 թվականի բյուջեի եկամտային մասում և ծախսային մասում ընդգրկել առաջնահերություն պահանջող ծախսերի ֆինանսավորման համար:

   գ/ ծախսերի տնտեսագիտական և գործառական դասակարգման նախատեսված հոդվածների միջև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 33 – րդ հոդվածի 3 – րդ կետի համապատասխան կատարվող վերաբաշխումները չեն կարող գերազանցել հաստատված ծավալի 15 - %ը:

Համայնքի ղեկավար՝ / Ռ. Մարգարյան

ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի 2017 թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2016 – 2021 թ.թ. հնգամյա զարգացման ծրագիրը:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների խնայողական օգտագործումից:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները և բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:
- Իրականացնել տեղական տուրքերի և վճարների, համայնքային ծառայությունների մատուցման վարձավճարների սահմանման և գանձման ճկուն քաղաքականություն:
- Ապահովել բյուջեի մուտքերի կանխատեսումների իրատեսությունը:
- Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը և որակը:
- Բարձրացնել համայնքապետարանի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը:
- Իրականացնել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքներ:
- Կապիտալ ներդրումներ կատարել բարեկարգման և ճանապարհային տնտեսության բնագավառներում:
- Աշխուժացնել համայնքի մշակույթային, մարզական և հասարակական կյանքը:
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:

Ես դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2017 թվականի բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման ուղղությամբ:

Պառավաքար համայնքի ղեկավար՝ / Ռ. Մարգարյան

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ

Պառավաքար համայնքի 2017 թվականի տեղական բյուջեն բաղկացած է վարչական ու ֆոնդային մասերից և ունի համայնքի հետագա զարգացմանը նպատակաուղղված ուղվա - ծություն:

Վարչական բյուջեն ձևավորվելու է հետևյալ եկամտատեսակներից.

1. Սեփականաշնորհված հողի հարկից,
2. Գույքահարկից,
3. Հողի վարձակալության վճարից,
4. Դոտացիայից:

Ֆոնդային բյուջեն ձևավորվելու է տարեսկզբի ազատ մնացորդից, որը կազմում է 3 մլ 200 հազար դրամ:

Վարչական բյուջեի վերը նշված եկամտատեսակները բաշխված են հետևյալ կերպ.

5. ա/ Սեփականաշնորհված հողի հարկ – 672 հա, որի հարկը կազմում է 4100000 դր.
   բ/ Սեփականաշնորհված հողի ապառք՝ 13 մլ 556 հազար 400 դրամ, որից 2017 թվ. բյուջեում գումար չի նախատեսվում:
6. Գույքահարկ 3084706 դրամ, որից՝
   ա/ 3056600 դրամը կազմում է 491 միավոր տրանսպորտային միջոցների գույքահարկից,
   բ/ Գույքահարկի ապառք՝ 1մլ 887 հազար 100 դրամ, որից նույնպես 2017 թ. բյուջեում գումար չի նախատեսվում,
   գ/ 28106 դրամը՝ 13 միավոր շինությունների գույքահարկից, ապառքը՝ 164600 դրամ:
7. Ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքի վարձավճար՝ 455676 դրամ՝
   ա/ Վիվասելին հատկացված 0.04 հա տարածքի համար 420 հազար դրամ,
   բ/ «Հայաստանի էլեկտրացանցեր» ՓԲԸ «Աղստև» մ/ճ - ի ենթակայանների զբաղեց – ռած տարածքների համար՝ 35676 դրամ:
8. Դոտացիա՝ 31 մլ 264 հազար 500 դրամ, որից 27 մլ 97 հազար 500 դրամը – ֆի – նանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա, 4 մլ 167 հազար դրամը՝ համայնքի բյուջեի եկամուտների կորուստների դիմաց պետության կողմից փոխհատուցվող գումար:

Ընդամենը եկամուտներ՝ 38 մլ 904 հազար 906 դրամ:

Տարեսկզբի ազատ մնացորդ՝ 3 մլ 200 հազար դրամ, այդ թվում. ֆոնդային՝ 2 մլ 528 հազար 193 դրամ, վարչական՝ 671 հազար 807 դրամ:
Բյուջեի ծախսային մասը կազմում է.

1. Տեղական ինքնակառավարման մարմինների պահպանման ծախսեր
2. Մանկապարտեզին տրվող սուբսիդիա
3. Պահուստային ֆոնդի ձևավորում
4. Սոցիալական պաշտպանություն
5. Գյուղատնտեսություն
6. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայություն
7. Ճանապարհների բարեկարգում
8. Ջրամատակարարում
9. Փողոցների լուսավորում
10. Մշակութային ծառայություն
11. Հանգստի և սպորտի ծառայություն

1. Տեղական ինքնակառավարման մարմինների պահպանման ծախսեր.

ա/ աշխատավարձ ..... 16000000, դրամ
բ/ պարգևատրություն 1308400,
գ/ Կապի ծառայություններ ..... 148000, այդ թվում՝ ֆիքսված ցանց – 60000
բջջային---------- 88000
դ/ Ապահովագրական ծախսեր՝ ԱՊՊԱ 35000,

ե/ տեխ. սպասարկում 15000,
զ/ ներքին գործուղում 300000,
է/ տեղեկատվական ծառայություններ 35000,
ը/ մասնագիտական ծառայություններ 90000,
թ/ ընդհանուր բնույթի այլ ծառ. – ներ 200000,
ժ/ շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում 800000,
ի/ մեքենաների և սարքավորումների ընթացիկ
նորոգում և պահպանում 200000,
լ/ գրասենյակային նյութեր 100000,
խ/ տրանսպորտային նյութեր /վառելիք բն. գազ/ 800000,
ծ/ հատուկ նպատակային այլ նյութեր 500000,
կ/ համակարգչային ծառայություններ 343000,
հ/ վարկանիշային ամսագրի ձեռք բերում 150000,
ընդամենը ..... 21024400 դրամ վարչական բյուջե
վարչական սարքավորումներ ..... 2000000 դրամ ֆոնդային բյուջե:

2. Մանկապարտեզին տրվող սուբսիդիա
ա/ աշխատավարձ ..... 6500000 դրամ,
բ/ ներքին գործուղում 30000,
գ/ ինտերնետ կապ 105600,
դ/ էներգետիկ ծառ. – ներ /վառելիք բն. գազ/ 400000,
ե/ գրասենյակային նյութեր 60000,
զ/ տնտեսական ապրանքներ 80000,
է/ սննդամթերք 1000000,
ը/ բժշկական ստուգում 60000,
թ/ մասնագիտական ծառայություններ..... 70000,
ժ/ այլ ծախսեր 40000,
ընդամենը ..... 8345600 դրամ:

3. Պահուստային ֆոնդի ձևավորում ..... 1772482 դրամ,
4. Սոցիալական պաշտպանություն ..... 2800000 դրամ,
5. Գյուղատնտեսություն ..... 40000 դրամ,
6. Ընդհանուր բնույթի համայնքային ծառ. – յուն.... 532400 վարչական բյուջե
այդ թվում՝ անդամավճար ԲՀՄ – ին 365000,
անդամավճար ՀՄ – ին 17400,
մասնագիտական ծառ. – ներ 80000,
բնապահպանական վճար 70000,
վարչական սարքավորումներ ..... 1200000 ֆոնդային բյուջե
ընդամենը՝ ..... 1732400 դրամ:

7. Ճանապարհների բարեկարգում ..... 940000 դրամ,
8. Ջրամատակարարում ..... 800000 դրամ,
9. Փողոցների լուսավորում ..... 1450000 դրամ,
10. Մշակութային ծառայություն ..... 800000 դրամ,
11. Հանգստի և սպորտի ծառայություն ..... 400000 դրամ:
Ընդամենը ծախսեր ..... 42104882 /քառասուներկու միլիոն մեկ հարյուր չորս հազար ութ հարյուր ութսուներկու ութսուներկու/ դրամ:

Պառավաքար համայնքի
ղեկավար՝ / Ռ. Մարգարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 18 – Ա

ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 Թ

ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ - Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 26 – րդ մասով, առաջնորդվելով 24.12.2014 թվականի Կառավարության թիվ 1405 – Ն որոշումով, համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Պառավաքարի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2017 թվ. հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը (հավելված 1), մանկապարտեզ ՀՈԱԿ – ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը (հավելված 2):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պառավաքար համայնքի

ղեկավար՝ /Ռ. Մարգարյան

Հավելված 1

Պառավաքար գյուղական համայնքի ավագանու

2016 թվ. նոյեմբերի 25 – ի N 18 - Ա որոշման

ՊԱՌԱՎԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ __ 12 __
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար* (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Համայնքի ղեկավար	1	262500	--	262500
	Հայեցողական պաշտոններ				
2	Համայնքի ղեկավարի օգնական	1	153000		153000
		--			
	Համայնքային ծառայողներ				
3	Աշխատակազմի քարտուղար 1.2-1	1	131750	--	131750
4	Գլխավոր մասնագետ 2.3-1	1	129500	--	129500
5	Առաջատար մասնագետ	1	77903	--	77903
6	Առաջատար մասնագետ	1	77903	--	77903
	Տեխսպասարկման անձնակազմ				
7	Պարետ	1	72751		72751
8	Ցրիչ	1	77903		77903
9	Վարորդ	1	100500	--	100500
10	Օպերատոր	1	77903	--	77903
11	Տնտեսվար	1	72751		72751
12	Հավաքարար	1	72751		72751
	Ընդամենը	12	1308365		1308365

Աշխատակազմի քարտուղար _____ ___ /Ա. Ծատուրյան __

ստորագրություն անուն, ազգանուն

Հավելված 2

Պառավաքարի գյուղական համայնքի ավագանու

2016 թվ. նոյեմբերի 25 - ի N 18 - Ա որոշման

Պառավաքարի մանկապարտեզ ՀՈԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ __ 8 __
2. Պառավաքարի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքի անվանումը	Հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	___% հավելավճար* (դրամ)	Ամսական աշխատավարձ (դրամ)
1	Տնօրեն	1	93645	--	93645
2	Դաստիարակչուհի	1	77903	--	77903
3	Երաժիշտ	1	72751		72751
4	Դաստիարակի օգնական	1	72751		72751
5	Խոհարար	1	72751		72751
6	Տնտեսվար – պահեստապետ	1	72751		72751
7	Բուժքույր	0.5	38952		38952
8	Դայակ	0.5	38952		38952
	Ընդամենը	7	540456		540456

Աշխատակազմի քարտուղար _____ ___ / Ա. Ծատուրյան ___
ստորագրություն անուն, ազգանուն

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19 – Ա

ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016 Թ.

ՊԱՌԱՎԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 – րդ հոդվածի 29 – րդ մասով՝ համայնքի ավագանին

Որոշում է

1. Հաստատել համայնքի սեփականության 2017 թվականի գույքագրման փաստաթղթերը:

2. Որոշումն ուժի մեջ համարել ստորագրման պահից:

Պառավաքար համայնքի

ղեկավար՝ Ռ. Մարգարյան